Հուսիկ Արա

Կարոտ

Դու իմ աշխարհն էիր, որ արդեն վրիպել եմ.
իմ գիշերները վաղուց են առանց քո երազների:

Զանգերն են ղողանջում դանդաղ ու թույլ-թույլ,
և ես հեռացող ոտնահետքերի ցավն եմ զգում,
որ կրնկում են մարմնիս մեջ:
Աշնան նոսր երկնքում
չվող թռչունների թևեր են՝ երամ-երամ.
կարապի երգն եմ հասկանում ջրերի վրա՝
մեկ անգամ, որ վերջին անգամն է:

Կտոր-կտոր է անում սիրտս հիմա
ամեն հեռացող բան.
մի քիչ դանդաղ գնա,
ճանապարհդ շատ է հոգնել իմ մեջ:

Կարոտն է կաթում գանգամաշկիս նույն կետին՝
համաչափ տկկոցով ու ծակող սառն է.
այդպես մահապատիժ են իրագործում
չգիտեմ որ անտեր երկրում.
ի՜նչ ստույգ են աչքերը քեզնից նայող հոգեվարքի:

Դու իմ մեջ այնքան շատ ես,

որքան ոչ մի տեղ չես.
և ես ամեն մանրուք պահպանում եմ զգույշ՝
հանկարծ մաս չպակասի ամբողջից,
ու երբեմն էլ շոյում եմ մարմինս դողով,
որ դու ես ամբողջովին:

Կարոտի մունետիկն եմ մոլոր,
որ մեր կյանքի փողոցներում
կանչում է՝ սեր կա, կա՛ սերը,
բայց չի տեսնում և ընտրում է միշտ սխալ:

Քո աստեղային դիպվածն էի ես,
որ վրիպեցիր օրերի մեջ: